# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

14.11.2017թ.

## ՈՐՈՇՈՒՄ
**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**
**թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/41**

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) հաշվի առնելով «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 03.11.2017թ. ներկայացված՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար ««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի տուրբինային արտադրամասից և կայանին կից հանգույցից ապամոնտաժված գերծանր սարքավորումների տեղափոխում պահեստ»» ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-5/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թիվ 5.2 արձանագրությամբ «Բիգ էներգո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու մասին որոշումը չեղյալ համարելու պահանջի մասին բողոքը և հիմք ընդունելով Խորհրդին ուղղված՝ ԳԲԽ-ԱՄ-2017/41 բողոքն առանց քննության թողնելու մասին «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի 10.11.2017թ. գրությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 21.04.2017թ. «Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդի գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 1 որոշման 45-րդ կետի դրույթներով.

ՈՐՈՇԵՑ

«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 03.11.2017թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝** **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**